


Երոպական խորհուրդը երէկ մտաւեզուութիւն յայտնեց պատկերասփիւռի «Ա 1+» եւ «Նոյեան Տապան» կայաններուն սփռումի արտօնագիր մերժելու Հայաստանի ձայնասփիւռի եւ պատկերասփիւռի ազգային յանձնաժողովի որոշումին համար:

Երոպական խորհուրդի ընդհանուր քարտուղար Վալթեր Շուիւրը հիմնուելով Հայաստանի մէջ մամուլի պատուօրէնի հարցերու ԵԱՀԿի յատուկ ներկայացուցիչ Ֆրէյմուտ Տիւլէի եզրակացութիւններուն վրայ, քննադատեց վերոնշեալ յանձնաժողովի որոշումը եւ ընդգծեց, որ Հայաստանի իշխանութիւնները պէտք է առիթ տան այլապէս կարծիքներու արտայայտման:

ՍՍՏՏԱՄԵՆ ՆՈՐ ՊԱՏԳԱՄՄԸ, ՍՓՈՌՏԻՎ «ԱՐԱՊԻԱ»ԷՆ

ՍՍՏՏԱՄ ՇԻՒՄԵՅՆԻ ԵՐԿՈՒ ԶԱԲԱԿՆԵՐՈՒՆ ՍՊԱՆՈՒԹԵԱՍԲ ԻՐԱՔԻ ՍԷՋ ԱՊԱՇՏՈՎՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԵՐԱՇԽԱԴՐՈՒՄԸ



Սատտամ Հիւսէյնի երկու զաւակներուն՝ Ուտաւի եւ Քուսայի սպանութեան լուրը ցնծութեան ալիք մը բարձրացուց իրաքցիներուն մօտ, որոնցմէ շատեր սակայն յաւելեալ փաստեր կը պահանջեն՝ հաստատելու համար որ իսկապէս սպանուած են երկուքը: Դաշնակից ճակատը եւս ողջունեց Ուտաւի եւ Քուսայի սպանութիւնը, որ «նոր էջ» մը պիտի բանայ նոր Իրաքի պատմութեան մէջ: Ողջունողներուն կարգին սակայն կային նաեւ վերապահներ, որոնք զգուշացուցին, որ Սատտամի երկու զաւակներուն սպանութիւնը ենթադրելի չի տար, թէ Իրաքի մէջ ապահովութիւնն ու կայունութիւնը պիտի երաշխաւորուին:

Իրաքցիները մեծ ուրախութեամբ ողջունեցին Ուտաւի եւ Քուսայի սպանութեան լուրը, որ հրապարակուած էր Երեւանի Երեւանի համալսարանի կողմէ: Իրաքի իշխող խորհուրդին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը մը ողջունեց լուրը, զիտեղ տալով որ անոնց սպանութիւնը կը ներկայացնէ համար մեծ օր մըն է ասիական յայտարարեց Հոնկ Բոնկի մէջ: Պէյրութ, որ երկու անձնաւորութիւնները ոչ միայն իշխանութեան պարագլուխը կը գտնուէին, այլեւ՝ պատասխանատու են մարդկութեան դէմ գործուած ոճիրներու, ինչպէս կը նախարար Եոնրի Ֆետտի ըսաւ, որ Ուտաւի եւ Քուսայի սպանութիւնը կաշտուած էր Իրաքի ապահովութիւնը: Ֆետտի ըսաւ, որ Սատտամի կողմէ Սոսուրի համար դժուար է անմիջապէս դատել ու վճռել, թէ ի՞նչ ազդեցութիւն պիտի ունենայ եղբայրներուն սպանութիւնը Իրաքի ապագային վրայ:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան բանբերը իր կարգին մաղթեց, որ երկուքին սպանութիւնը պիտի նպաստէ կայունութեան վերահաստատման յետպատերազմեան Իրաքի մէջ:

ՊԱՏՆԱԿԻՑՆԵՐԸ Կ'ՈՂՋՈՒՆԵՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ օղջունեց սպանութեան լուրը: Սպիտակ Տան մէջ ընդունելէ ետք Միացեալ Նահանգներու պաշտպան Նոկոլա Մարտինի յայտարար փոխարինուած էր Սատտամի սպանութեան լուրին հանդէպ: Անոնք կ'ըսեն, թէ ուրիշ անհայտ կամ տիրելու պատճառ չունին, որովհետեւ սպանութիւնը որեւէ ձեւով պիտի չազդէ իրենց կեանքին վրայ:

Ամերիկեան զինուորական արքիւրներ յայտնեցին, որ Իրաքի մը իրենց տեղեկութիւններ փոխանցած է Ուտաւի եւ Քուսայի սպանուած վայրին մասին: Անոնք չտուեցին սակայն իրաքցիին անունը, որ 30 միլիոն տոլար վարձատրութիւն ստացած է «մատնութեան» համար: Ամերիկեան արքիւրները ըսին, որ ան իրենց պաշտպանութեան ու հովանաւորութեան տակ կը գտնուի: Կարգ մը զբոսորդներ ըսին, որ մատնողը չէին նուազ Մոհամէտ Զայտան է, որուն բնակարանը ապաստանած էին երկու եղբայրները: Ամերիկեան ուժերը վեց ժամ ռմբակոծած էին բնակարանը:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ օղջունեց սպանութեան լուրը: Սպիտակ Տան մէջ ընդունելէ ետք Միացեալ Նահանգներու պաշտպան Նոկոլա Մարտինի յայտարար փոխարինուած էր Սատտամի սպանութեան լուրին հանդէպ: Անոնք կ'ըսեն, թէ ուրիշ անհայտ կամ տիրելու պատճառ չունին, որովհետեւ սպանութիւնը որեւէ ձեւով պիտի չազդէ իրենց կեանքին վրայ:

Իսրայէլեան նախարարական յանձնախումբ մը երէկ կասեցուց Համաս եւ Իսլամական Ժիհադ շարժումներուն արգելափակեալ անդամներուն ապատարձակման գործընթացը, ըսելով, թէ անոնց պարագաները կառավարութեան կողմէ պիտի գնահատուին:

Միւս կողմէ, անիկա հաւանութիւն տուած է 350 պաղեստինցիներու ապատարձակման: Այս ամսուան սկիզբը կ'աւարտուի Իսրայէլի սկիզբունքային ձեռնարկին ընդունած էր անոնց ապատարձակումը, սակայն կ'ակըրնակալուէր, որ յանձնախումբը կ'անաչ յոյս տար 450 պաղեստինցիներուն, ներառեալ Համասի եւ Իսլամական Ժիհադի անդամներու, որոնք չեն մասնակցած իսրայէլացի պոլիս իւսոյ յարձակումներու:

Բանտարկեալներու հարցերու պատասխանատու պաղեստինցի նախարար Հիշամ Ապտէլապպա յայտնած է, թէ Համասի եւ Իսլամական Ժիհադի անդամ բանտարկեալներու ապատարձակման գծով յանձնախումբին կեցւածքը քաղաքական գործընթացը անելի պիտի մատնէ:



Պաղեստինեան երկու շարժումները նոյնպէս դատապարտած են որոշումը, որ կրնայ «վտանգաւոր հետեւանքներ» ունենալ, ըստ Համասի բարձրաստիճան մէկ պաշտօնատարին: Իսկ Իսլամական Ժիհադի ղեկավար Մոհամէտ Հիւսէյնի ըսած է, որ Իսրայէլ բանտարկեալներուն հարցը կ'օգտագործէ «պաղեստինցիներուն շանթած ընելու համար»:

Միւս կողմէ, Յորդանանի Ապտալա Բ. թագաւորը երէկ Ամմանի մէջ Ապպասի հետ տեսակցութեան մը ընթացքին, կոչ ուղղած է Իսրայէլի, որ ջոշափելի քայլերու դիմէ՝ խաղաղութեան ձեռնարկը քարտէսին գործարարութեան համար:

Ան կը խօսէր նախքան Ապպասի Ռաշիդին կողմէ, Յորդանանի Ապտալա Բ. թագաւորը երէկ Ամմանի մէջ Ապպասի հետ տեսակցութեան մը ընթացքին, կոչ ուղղած է Իսրայէլի, որ ջոշափելի քայլերու դիմէ՝ խաղաղութեան ձեռնարկը քարտէսին գործարարութեան համար:

ՄԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ ԼՍԵՑ ԻՐԱՔԻ ՄԱՍԻՆ ՔՈՏԻ ԱՆԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ՄԱԿԻ Ապահովութեան Խորհուրդը արտակարգ նիստով մը քննարկեց Իրաքի յետպատերազմեան իրավիճակը, որուն ընթացքին Իրաքի մասին տեղեկագիր մը ներկայացուց ընդհանուր քարտուղար Քոֆի Անան, ինչպէս նաեւ առժամեայ իշխող խորհուրդին պատուիրակները ներկայացուցին իրենց պատկերացումը Իրաքի ապագային մասին:

Իր տեղեկագիրին մէջ, Անան օղջունեց իշխող խորհուրդին կազմուածութիւնը, զայն նկատելով կարելի թաւալ մը Իրաքի ինքնորոշման ճամբուն վրայ: Անան սակայն զգուշացուց Միացեալ Նահանգներուն ու Բրիտանիան «գուրսէն» ժողովրդավարութիւնը պարտադրելու մտքով: Ան պահանջեց նաեւ, որ Իրաքի զինուորական զորաւոր շուտով վերջ գտնէ: Անան աւելցուց, որ մինչ այդ կենսատեղի է, որ Իրաքի ժողովուրդը ունենայ յոստատեման կարգի մը: Պաշտպանական կարգի մը մասին խօսելու մտքով չեն իրաքցիները: Ապահովութեան Խորհուրդի անդամները, րացի Բրիտանիայէն եւ Միացեալ Նահանգներէն, ընդգծեցին, որ Իրաքի ժողովուրդին կողմէ ընտրուած կառավարութիւնը մը: Պաշտպանական կարգի մը մասին խօսելու մտքով չեն իրաքցիները: Ապահովութեան Խորհուրդի անդամները, րացի Բրիտանիայէն եւ Միացեալ Նահանգներէն, ընդգծեցին, որ Իրաքի ժողովուրդին կողմէ ընտրուած կառավարութիւնը մը: Այս միջադէպէն քանի մը ժամ առաջ, զինուոր մը սպանուեցաւ հիւսիսի մէջ:



Անան կ'ընդունի Իրաքի պատուիրակութիւնը

Իրաքի իշխող խորհուրդը ներկայացնող երեք (ԱՅՓ)

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ ԻՐԱԽԱՏԻՐՈՒԹԻՒՆՆ Է

Ամրան թե՛ օրերուն, արձակուրդի մեկնած ըլլանք թէ ոչ, հանդիպումները կը նուազին, տեսակետներ չենք փոխանակեր: Միակ նպատակը այս մեկուսացման այն կրնայ ըլլալ, եթէ ուզենք, որ մենք մեզի հետ հաշի նստինք, նժարի վրայ դնենք մեր կեանքը ընդհանրապէս, դատենք: Այդ հաշուեյարդարին մէջ ոմանք տեղ կու տան նաեւ իրենց յանձնարարութիւններուն, աւելի պարզ բաներով՝ ազգային-համայնքային կեանքին իրենց մասնակցութեան: Կը փորձենք պատասխանել այն պարզ հարցումին, թէ ի՞նչ կրնայինք ընել եւ չընել, չուզեցինք ընել: Ի հարկէ՛ մեզմէ՛ իւրաքանչիւրը այս հարցադրումներուն համար տարբեր հերթականութիւն կ'ընտրէ, ըստ նաշակի, համոզումներու, կենսափորձի: Չեմ խօսիր անոնց մասին, որոնք դադրած են նման հարցադրումներ կատարել:

Տիրութեամբ եւ հպարտութեամբ միաժամանակ կ'ըսենք, որ Սփիւռքը այսօր հայ ժողովուրդին կէսէն աւելին է: Յետո՛յ... Այդ ազգի կէսէն աւելին կը ներկայանայ իր կարողականութեան, փոթանսիէին համապատասխան ազգային-համայնքային նախաձեռնութիւններով եւ յաջողութիւններով: Մեր խօսքը մասնաւորելով Սփիւռքի մասին, կրնա՞նք ըսել, որ ան ի սրտէ կը կառչի տոկոսով եւ տեւելու ազգային քաղաքականութեան մը, այդեօք հրապարակի վրայ եղած իրարանցումները իսկապէս չենք փոքրամասնութեան մը թափահարումները չենք: Կամ ինչո՞ւ միայն փոքրամասնութիւն մը ներկայ պիտի ըլլայ եւ ստուար մեծամասնութիւն մը պիտի ըլլայ անտարբեր, բախտաւոր պարագային՝ հանդիսատես: Յանապահ կ'ստան տուած ենք, որ սփիւռքեան պայմաններու մէջ առարկայական կարծիք կազմելու եւ ըստ այնմ՝ ծրագիր մշակելու համար գիտական եւ վստահելի տուեալներ չունինք: Միացեալ նահանգներու հայերու թիւը կը գնահատուի մէկ կամ մէկուկէս միլիոն, կարծեք մէկին եւ մէկուկէսին միջեւ շատ տարբերութիւն չըլլար: Նոյնը կրնանք ըսել Ֆրանսայի համար: Դեռ ոչինչ կրնանք ըսել այդ համարների շերտերու ազգային տեսանկիւնէ արժեքին մասին: Մեր գնահատումները ենթակայական են, այդ պատճառով ալ իրականութիւնը յանապախ համապատասխաներ գործունեայ եւ խանդավառ անձերու ակնկալութիւններուն:

Կարգ մը երկիրներու մէջ կազմած են հայկական հասցեարան, ինչ որ մօտաւոր գաղափար մը կու տայ այդ համայնքներուն մասին, իբրեւ համարներ եւ տեղաբաշխում: Բայց գաղափար չենք կրնար կազմել ոչ ոք այդ համայնքի օգտագործուած եւ քննարկուած ընթացքին մասին: Մեր համայնքներուն մէջ մասնակից-

ներու եւ յանձնարարներու տոկոսը աւելցնելու համար կազմակերպուած աշխատանք չի կատարուիր, բախտաւոր պարագային մասնակիցներ եւ յանձնարարներ կը գտնուին ընտանեկան-ընկերական եղանակով, ինչ որ պատճառ կ'ըլլայ ներհամայնքային կեանքի մէջ կրկնակցութիւն ստեղծման, զորար անգիտացող կամ իրարու նկատմամբ անհանդուրժող:

Մեր ամէնէն կազմակերպուած համայնքներն անգամ տոկալու եւ տեւելու լուրջ հարցեր ունին: Ի՞նչպէս կրնանք լուծուի գտնել անոնց, եթէ հանդիսատես ենք, կամ՝ երբ մասնակցութեան կոչ չենք ընել: Ի՞նչ բան կ'արգիլէ, որ կոչ ընենք աւելի մեծ թիւով մարդոց մասնակցութեան, որ սոսկ խօսք չըլլայ, ոչ միայն օժանդակութիւններու գծով, այլ նաեւ՝ ծրագիրներու մշակման, որոշումներու կայացման: Մեր իրականութեան մէջ որոշում կայացնողներու մէկէ աւելի շրջանակները գրեթէ փակ են, կարծեք գաղտնիացման հետեւող ընկերութիւններ ըլլային, էջոթեռիք, իրաւասութիւնը հակադրելով մասնակցութեան բարոյական իրաւունքին: Ոչ ոք հարց կու տայ, թէ ի՞նչ կը բանին համայնքային կառոյցները, կամ ինչո՞ւ մնայուն օրակարգ չեն հայկական վարժարանները, հայկական թատրոնը, հայերէնի գործածութիւնը, հայերէն գիրքը, հայկական թերթը: Ո՞վ եզրակացուցած է, որ այսպէս կոչուած լուռ մեծամասնութիւնը իրապէս ամբողջութեամբ անտարբեր է:

Այսքան բազմերես հարցերու մասին եթէ մտածենք, երբ ամառնային արձակուրդի մեծ կամ փոքրիկ հրապարակներ կան, մեր երջանկութիւնը կը խանգարուի: Բայց պահեր կան, երբ պարզապէս ոչինչ կ'ընենք: Ինչո՞ւ քանի մը մտածուի չմրտել թուղթի կտորի մը վրայ եւ զայն ներկայացնել բարեկամներու, որոնք յանձնարարութեամբ կ'աշխատին: Այս կ'ըլլայ առաջին քայլը մասնակցութեան եւ մտածումի հոսանք ստեղծելու:

Ամրան Ֆարնիչի միջին պահերը կը համեմատենք հայերէն ընթերցումներով, թերթ կամ գիրք, նոյնիսկ եթէ ճիշդ է այն առարկութիւնը, որ այդ ընթերցումը ճիշդ կը պահանջէ: Ճիշդ կը պահանջէ այսօր, բայց ոչ վաղը: Սկսելու համար ինչո՞ւ հայկական եւ մանաւանդ հայերէն թերթը պիտի չվերադառնայ մեր յարկին տակ:

Վերամուտին, այն շատը կամ քիչը որուն մասին մտածած կ'ըլլանք, կրնա՞նք վերածել ազնիւ գործի:

Յ. ՊԱՆԵԱՆ

Վերջին օրերում Հայաստանի պետական-պաշտօնական այլերի կողմից հնչեցին ելույթներ ու խօսքեր՝ Հայոց Յեղասպանութեան, Հայաստան-Թուրքիա սահմանի րացման եւ երկու երկրների յարաբերութիւնների րականնացման մասին:

Չանձնաւորելով հարցը՝ անդրադարձանք երեւոյթներին:

«Հայոց Յեղասպանութեան ճանաչման խնդիրը Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգում եղել է, կայ եւ կը մնայ՝ անկախ ամէն ինչից, բայց դա որեւէ կերպ Հայաստանի կողմից չի ներկայացում որպէս Թուրքիայի հետ յարաբերութիւնների րականնացման նախապայման»:

ՀԱՐՑ 1.- Հապա, ինչո՞ւ ինքը՝ Թուրքիան Հայաստանի հետ յարաբերութիւնների րականնացման նախապայմանը համարում է «Հայոց Յեղասպանութեան ճանաչման» խնդրից Հայաստանի հրաժարումը:

ՀԱՐՑ 2.- Եթէ Հայոց Յեղասպանութիւնը Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգում է, բայց ոչ որպէս նախապայման, ապա դիւանդաբանական ո՞ր հնարքների շնորհիւ է կիրառուել Հայաստանի հրաժարումը:

ՀԱՐՑ 2.- Եթէ նշուած հարցի ընդունումը պայմանաւորուած է ուրիշներ կեցուածքով ու իմացութեամբ, ի՞նչ է լինելու, ասենք, մեր միայն համագործակցութեան համարուող Արցախեան հարցի կարգաւորման խնդիրը: Իսկ եթէ այդ ուրիշները (ինչպէս հրէական լուրջութեամբ) մեր ազգային-պետական շահերին հակասող ու վտանգող «նախա-

պայմաններ» մէջտեղ բերեն, պէտք է կո՛ւլ տանք այդ ամէնը:

«Մենք պահանջատէր չենք, մենք հայրենատէր ենք...»: - ասում է նոյն պետական այլը՝ Հայոց Յեղասպանութեան թեման շօշափելիս:

Յարգելի՛ պետական այլը, հայրենատիրութիւնը դեռ չի նշանակում, որ պիտի դադարենք իրաւատէր լինելուց ու չպահանջենք մեր ոստանկոխուած իրաւունքները, ինչպէս որ քաղաքակիրթ ու ազատասէր 1974ից մինչ օրս նոյն Թուրքիայի կողմից կիսաւել ու բռնազաւթուած է մնում: Բայց արի ու տես, որ կիւրոսի հարցում Եւրոմիութեան կողմից դրուած է նախապայման՝ Թուրքիայի առջեւ միջազգային կազմակերպութեանը անդամագրուելու համար:

Նախապայմանների մարտավարութիւնը ինքնին բացասաբար չի հնչում, կարելո՞ր որ այդ նախապայմանները յստակ հասցեագրուածներով ու իրաւական, պատմական ու դիւանդաբանական իրացուցիչ հիմքերով դրուեն արտաքին քաղաքականութեան օրակարգում, եւ որոնց հիմքում էլ մշակուած է մօտակայ ու հեռավայ ծրագիր՝ համապատասխան քայլերի կիրառմամբ:

ԳԵՐԵՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ

ՄԵԾ ԻՐԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ՇԵՏԵԹԵ

BIG SALE

STORES



Թ-Ի ՇԼՐԹ
6.000 Լ.Ո.



ՀԱԳՈՒՍՏ
8.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ
2.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ
7.000 Լ.Ո.



ՀԱԳՈՒՍՏ
2.000 Լ.Ո.



ՇԱՊԻԿ
10.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ
10.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ
5.000 Լ.Ո.



- ՏԱԲԱՏ 5.000 Լ.Ո.
- ԱՆԹԵԻ ՊԼՈՒԳ 2.000 Լ.Ո.



- ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԶԵԻԻ
Թ-Ի ՇԼՐԹ 10.000 Լ.Ո.
- ԳԼԽԱՐԿ 2.000 Լ.Ո.



ՍԱՆՏԱԼ
4.000 Լ.Ո.



ԿՕՇԻԿ
4.000 Լ.Ո.



ԼՈՂԱԶԳԵՍՏ
9.000 Լ.Ո.

BIG SALE BRANCHES

- * ՀԱՍՐԱ ՄՐԵՆԱՍ
ՓԻԵՍՏԵԼԼԻԻ ԿԻՅ
☎ 01 / 343343
- * ՆԱՊԱԹԻԷԻ ՀՐԱՊԱՐԱԿ
☎ 03 / 949796
- * ՊԵՐԺ ՊԱՐԱԺՆԷ
☎ 03 / 678501
- * ԱՆԹԻԼԻԱՍ ՄԵՆԹԻ St. Elie
☎ 03 / 814161
- * ՍԱՐ ԷԼԻԱՍ CLASS ՎԵՍՏԱՍՄՆԻ ԿԻՅ
☎ 03 / 602554
- * ՅԵՐՆ ԷԼ ՇԼՊԷՔ
ՄՐԵՆԱՍ ՍԲԱԼԱ
☎ 01 / 294090

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՒԳԵՐ


Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ՏԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՆԱԽԱԽՈՐԴ ԾԱՇՎԱՍԵՂԱՆՆԵՐԸ ՓՈԽԱՐԻՆԱԾ ԵՆ ՖԱՍՔ ՖՈՒՏ ՎԱՃԱՌՈՂ ԾԱՇՎԱՆՆԵՐՈՒ ՍԵՂԱՆՆԵՐԸ



1954ին Միացեալ Նահանգներու մէջ ստեղծուած ֆասք ֆուտի հասկացողութիւնը ժամանակի ընթացքին տարածուած է աշխարհի բոլոր երկիրներուն մէջ եւ այսօր անիկա յայն ժողովրդականութիւն կը վայելէ բոլոր խաւերուն մօտ: Երկրային անիկա կը նկատուի ուստիի ճարտարաբանութիւնը: Ան ունի իրեն յատուկ ձեւեր: Երկիրները ժողովրդը գրաւելու, օժտուած ըլլալով հարուստ ճաշացոյցով եւ

մալսարան եւ կամ աշխատանքի: Ժամերու սղութեան, երթեւեկի դժուարութեան եւ խճողումի պատճառով երիտասարդը կը նախընտրէ համալրարանին կամ աշխատանքի վայրին մօտ ճաշարան մը ընտրել եւ ժամեր չվատնել անտանելի խճողումին մէջ:



ըլու առիթ: Տան մէջ համախմբուելու եւ ծնողքին ներկայութեան ազատօրէն խօսելու եւ կատակելու դժուարութիւն ունեցող անհատներուն լաւագոյն ժամադրավայրերը եղած են այս ֆասք ֆուտի կեդրոնները, որոնք իրենց ուսելիքները վաճառելու համար այդ ազատութիւնն ու առիթը կու տան երիտասարդներուն, քաջ գիտնալով, թէ որքան երկարի հաւաքը, այնքան աւելի պիտի աւելնան ապագայանքներն ու ծախսուած գումարները:

Ընտանիքի մէջ ամէնէն նուիրական եւ ջերմ պահերն մէկը կը նկատուի այն ժամը, երբ ընտանիքի բոլոր անդամները կը հաւաքուին ճաշի սեղանին շուրջ եւ միասնաբար ճաշելու կամ ընթրելու կողքին կը խօսին իրենց աւօրեային, հոգեբանական, աշխատանքային, ապրած հաճելի ու դժուար փորձառութիւններուն մասին: Ծաշսեղանին շուրջ ամբողջ ընտանիքը կ'անջատուի արտաքին աշխարհէն ու անոր բնածնած յայն հետաքրքրութիւններէն, որոնք ինքնաբերաբար իւրաքանչիւր անձ կը տանին տարբեր աշխարհ մը, որ շատ յաճախ հեռու է իր ծնողներուն ապրած աւօրեային եւ անոնց մտածելակերպէն:

Յարաբերաբար աճան գիներով: Ֆասք ֆուտի արտադրիչներուն նշանաբանն է բազմատեսակ ճաշերու, խմիչքներու եւ անուշեղէններու վայրկենական եւ ըստ յաճախողի պահանջին պատրաստութիւնը:

Նկատելի է, թէ արական սեռին պատկանող անհատները աւելի շատ այս ձեւերուն կը դիմեն, քան՝ իգական սեռին պատկանողները, որոնցմէ շատեր կը նախընտրեն գիշերը ճաշել եւ ուտել իրենց մօր պատրաստած ճաշերը եւ կամ փորձել տուն երթալ, եթէ կարելիութիւնները կը ներեն: Աղջիկներուն մէջ տարածուած է նաեւ տունէն ճաշ տանելու սովորութիւնը, որ գրեթէ գոյութիւն չունի տղոց մօտ, որոնք չեն ուզեր դիմել այդ նախաձեռնութեան եւ կը նախընտրեն ճաշարան երթալ ու արագ պատրաստուող ճաշ մը ուտել:

| ՈՒՍՈՐԱՆՆԵՐՈՒ | | ՏԱՆ | | | |
|--------------|--------|-------------|-----------------|----------------------|---------------------|
| Անի հասնել | Գարտաւ | Անցած կայքի | Անի հասնել մարտ | Շտապօրէն հետ կ'ըլլաւ | Կը սիրով կ'ապրաստել |
| 1% | 2% | 2% | 5% | 87% | 3% |

Ամէնօրեայ դրուածքներ անպայման գէթ մէկ անգամ ճաշի կամ ընթրիքի սեղանին շուրջ համախմբուող ընտանիքները այսօր սակաւաթիւ են, որովհետեւ այսօրուան կեանքն ու աշխատանքային թափը նկատի առնելով, բնականաբար, կարելի չէ ընտանիքի անդամներուն աշխատանքա-

Մայրուղիներուն եւ նոյնիսկ նեղ ճամբաներուն վրայ տիրական ներկայութիւն են ճաշի վերաբերող ծանուցումները, որոնք ախորժակ կը բանան, եւ ինքնաշարժով տուն ուղղուելու մասին մտածող անհատն իսկ լռելեայն կը համոզեն իրենց մօտ ճաշելու: Զայնասփիւնները եւս իրենց լայն դերակատարութիւնը կ'ունենան, յատկապէս եթէ նոր գեղջերու մասին խօսին եւ նոր արտադրութիւն մը ներկայացնեն իրրեւ «անմահական» ուտելիք:

Յաճախողներուն աւելի լայն առիթներ ընձեռելու համար այս ճաշարանները ստեղծած են ճաշը տուն կամ գործատեղի հասցնելու դրութիւն եւ հեռաձայնային հաղորդակցութեամբ որեւէ ճաշ կամ ընթրիք կարելի եղածին չափ արագ կը հասնի հոն, ուր յաճախողը կ'ուզէ:

| 7 ԱՆԳԱՄ | 14 ԱՆԳԱՄ | ԱՆԵՒԻՍՏՈՒՄ 11 ԱՆԳԱՄ | ԸՆԴՀ. |
|---------|----------|---------------------|-------|
| 28% | 59% | 13% | 100% |

| ՏԱՇՎՈՐԸ | ԸՆԴՈՒՆԵԼԻ | ՈՉ ԸՆԴՀ. | ԸՆԴՀ. |
|---------|-----------|----------|-------|
| 0% | 69% | 13% | 100% |

Այս բոլորին դիմաց ամբողջ մնալն ու չտկա-


Այս մէկը եւս կը գրաւէ երիտասարդներն ու իրենց աւօրեայ գործերով բեռնաւորուած անհատներ, որոնք ժամեր պատնելու փոխարէն կը նախընտրեն տունը կամ գրասենեակը մնալ եւ այդ ժամերը շահիլ գործ մը ամբողջացնելով:

Լայն ճաշացոյցակն ու աճան եւ որոշ չափով սուղ գիներով ուսելիքներու գոյութիւնը եւս գրաւելի երեւոյթ կը նկատուի, որովհետեւ անհատը կ'ընտրէ այն, որ յարմար է թէ՛ իր մարմնին եւ թէ՛ գրպանին:

Ժպտուն դէմքով եւ լեզուանի երիտասարդները եւս մեծ հաճոյքով կ'ընդունին հիւրերը, կ'առաջնորդեն զանոնք, համբերութեամբ կը բացատրեն իւրաքանչիւր ուսելիքի բովանդակութիւնը եւ կը մղեն յաճախողները որոշ ուսելիքներ փորձելու՝ նոր արտադրութիւններուն

րակի օրերը կարգ մը վայրեր յաճախելու համար նախապէս պէտք է ժամադրութիւն առնել ու տեղ ապահովել: Տորայէն դէպի ժուռնի տանող մայրուղիին վրայ նման ճաշարաններ լեցուած են եւ տիրական ներկայութիւն են: Անոնք առանց խօսելու ներս կը հրաւիրեն անցողները եւ անոնց առջեւ կը բանան ընտրութեան լայն դռներ: Փաստօրէն երիտասարդները արդէն իրենց ընկերային պահերը անցնելու եւ իրարու հետ ըլլալու համար կ'ընտրեն այս վայրերը եւ յարմար գինով, ուրախ ու հանգիստ մթնոլորտի մէջ ճաշելի ժամեր կ'անցնեն:

Ասոնք բոլորը հետաքրքրական են, սակայն, միւս կողմէ, այս ճաշարանները պատճառ կ'ըլ-



տան ֆասք ֆուտ վաճառող ճաշարանները, որոնք տարածուած են գրեթէ բոլոր շրջաններուն մէջ եւ հաստատուած են այնպիսի վայրերու մէջ, ուր երթալը յարմար ու դիւրին է գրեթէ բոլորին համար: Անոնք իրենց զանազան մասնաճիւղերով կը գտնուին լիբանանեան բոլոր շրջաններուն մէջ եւ անոնց գտնուած վայրերը ծրագրուած են այնպիսի ձեւով, որ անոնք յայտնուին անօթի անձերու դիմաց:

Նոր նոյնիսկ գոյութիւն ունին բուսակերներու, անողականոնի հետեւողներու յատուկ ուսելիքներ, որոնք թէեւ մանրամասնօրէն եւ տրեւալներով ներկայացուած են պիտակներուն վրայ, սակայն խորքին մէջ պատրաստուած են անբնական նիւթերով:

Սննդագէտներուն համաձայն, այս ճաշարաններուն հրամցուցած ճաշերն ու տապակոցները չեն ամբողջացնիր առողջապահական պայմանները, եւ անոնք շատ յաճախ պատրաստուած են փնասակար իւղերով եւ նիւթերով: Փաստօրէն այդ պատճառով է, որ անոնց գինը աւելի նուազ է, քան՝ այլ ուտելիքներ, կը վկայեն սննդագէտները:

Սակայն հակառակ այս բոլորին, ֆասք ֆուտի եւ անոնց կեդրոններու ժողովրդականութիւնը ոչ մէկ ձեւով կը խախտի կամ նահանջ կ'արձանագրէ, այլ նկատելի է, որ օրէ օր անոնք աւելի կը բարգաւաճին ու կը տարածուին լիբանանեան բոլոր շրջաններուն մէջ:

Համալսարանական տղաքն ու աղջիկները ամէնէն հաւատարիմ յաճախողներն են այս ճաշարաններուն, ուր անոնք շատ արագ ուտելիք եւ քիչ մը հանգստանալէ ետք կը վերադառնան հասարակ ճաշարանները:

| | ԱՅՈՒ | ՈՉ | ԱՆՊԱՏԱՍՈՒՄ | ԸՆԴՀ. |
|---------|------|-----|------------|-------|
| ԱՂՋԻՎԵՐ | 27% | 10% | 13% | 50% |
| ՏՂԱՔ | 41% | 2% | 7% | 50% |
| ԸՆԴՀ. | 68% | 12% | 20% | 10% |

ծանուցումը կատարելով: Այս երիտասարդները ընդհանրապէս համալսարանական տղաք ու աղջիկներ են, որոնք իրենց ապրուստը ապահովելու համար կը դիմեն որեւէ աշխատանքի եւ նկատի ունենալով, որ այս ճաշարանները ամէնէն աւելի տարածուածն են եւ պէտք ունին երիտասարդ ու որոշ ուսում ստացած անհատներու, անոնք կը դիմեն հոն:



Այդ ճաշարանները երիտասարդութեան կուտան նաեւ ընկերային ջերմ մթնոլորտի մէջ ապարդ ու որոշ ուսում ստացած անհատներու, անոնք կը դիմեն հոն:

| ԺԱՄԱՆԱԿԻ ԶԳՈՑՈՒԹԻՒՆ | |
|--|------|
| ԺԱՄԱՆԱԿԻ ԶԳՈՑՈՒԹԻՒՆ | 43% |
| ՏԱՇՎՈՐԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԳՈՂԱՑՈՒՑԻՉ Կ'ԸՆԴՀ. | 26% |
| ՏԱՆ ԶԵՆՈՒՄՈՒՄ Կ'ԸՆԴՀ. | 11% |
| ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՒՍՏՈՒՄ | 18% |
| ՎԱՐՓՈՒԹԻՒՆ | 20% |
| ԸՆԴՀ. | 100% |

լան ընտանեկան ջերմ մթնոլորտի չգոյութեան եւ տուններուն մէջ սեղաններուն շուրջ համախմբուող ճաշի կամ ընթրիքի հաւաքներու նուազումին: Այսօր մէկ սեղանի շուրջ նստելու եւ հանելի ժամեր անցնելու առիթ կը ստեղծուի կիրառի օրերն ու տօնական առիթներուն:

Փաստօրէն ֆասք ֆուտի ճաշարանները աւելի հետաքրքրական կը թուին, քան՝ տունները եւ անոնց ճաշսեղանները:

Այս բոլորին կողքին, ֆասք ֆուտը նաեւ մեծ վնաս կը հասցնէ անհատներուն, մասնաւորապէս երկար ժամանակի վրայ անդադար օգտագործելի անոնք, որովհետեւ առողջապահական ըլլալէ շատ հեռու են այդ ճաշերը եւ պատրաստուած կ'ըլլան փնասակար իւղերով:

| ՄԵՋ ԵՐՈՐԴ | ԿԸՍԸ | ԱՆԵՒԻՍՏՈՒՄ ԿԸՍԸ | ԸՆԴՀ. |
|-----------|------|-----------------|-------|
| 8% | 10% | 55% | 100% |

Անոնք բոլորը ճիշդ են, սակայն ճիշդ ու հաստատ է նաեւ այն իրողութիւնը, թէ այս ճաշարանները մեծապէս կը գրաւեն երիտասարդները եւ իրենց մօտ կը հրաւիրեն զանոնք, հակառակ անոր որ անոնք լաւապէս կը գիտակցին մատուցուած ճաշերուն առողջարար չըլլալուն:




Արագութեան այս դարուն, բնականաբար, արագօրէն պատրաստուող ճաշերը եւս իրենց դերակատարութիւնն ու կշիռը պիտի ունենան, սակայն չափաւորութիւնը կը մնայ լաւագոյն լուծուած:

Պատրաստեց ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՈՒԵՐԱՆԻԱ ԿԸ ԴԻՍԵՆ ՖԻՏԵԻՆ

ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՈՂ ՄՐՅԱՇԱՐՔԵՐՈՒՆ ԸՆԹԱՅՔԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԻՐԱՐԿՈՒԻ

Հայաստանի ճատրակի ֆեդերասիոնը երեկ բողոքագրի մը ուղարկեց ճատրակի միջազգային ֆեդերասիոնի (ՖԻՏԵ) նախագահ Իլիոս-Փինոպին, իր խոր ընդվզումը եւ գայրոյթը արտայայտելով վերջերս Նախիջևանի մէջ տեղի ունեցած 20 տարեկանէն վար ճատրակ աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին ընթացքին ստեղծուած միջնորոտին համար, որուն պատճառով Հայաստանէն եւ տարբեր երկիրներէն հայազգի վարպետներ հրաժարած են Պաքոյի մէջ տեղի ունենալիք մրցաշարքի մը մասնակցին:

Հայաստանի ճատրակի ֆեդերասիոնը ՖԻՏԵին պահանջեց ճատրակի միջազգային մրցաշարքերուն ընթացքին պահպանել օրինականութիւնը եւ վերջնականապէս արգիլել ազգային, կրօնական եւ այլ տեսակի խտրակա-նութիւնները՝ տարբեր տեսակի մրցաշարքերուն ընթացքին:

Իր կարգին Ուքրանիոյ ճատրակի ֆեդերասիոնը նմանօրինակ բողոք մը ներկայացուց ՖԻՏԵին, ըսելով որ անիկա մտադիր է Ազրպէյճանի մէջ տեղի ունեցող մրցաշարքերուն իր մասնակցութիւնը չբերել, եթէ իր երկրին ներկայացուցիչները լաւ վերաբերմունքի չարժանանան Ազրպէյճանի կողմէ:

Վերոնշյալ մրցաշարքին իր մասնակցութիւնը բերող Ուքրանիոյ աղջկանց ախոյեան՝ Քաթերինա Ռոնոնեան, Պաքոյի օղակայանը ժամանելէ անմիջապէս ետք իր երկիրը զրկուած էր:

ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՍԱԻ ՔԻԹՅՊԻԻՆԸԼԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Քիթյապիւնէյի մէջ (Աւստրիա) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան (դասուած՝ 14րդ) 6-4 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք իր մրցակիցը՝ Ալպէր Փորթապը (Սպանիա) ապահովեց Գ. հանգրուանին իր տոմարը:

ՊԵՔՆԱՄ ԺԱՄԱՆԵՅ ՄԱՏՐԻՏ



Պեքնամ 35 միլիոն եւրոյի փոխարէն Մանչեսթըր Եւոնայթընտէն Ռէյալ Մատրիտի միացած անգլիացի միջազգային միջնապահ Տէյվիտ Պեքնամ երեկ ժամանեց Սպանիոյ մայրաքաղաք՝ Մատրիտ, սկսելու համար 2003-2004 եղանակի նախօրեակին տեղի ունենալիք փորձերուն:

28 տարեկան Պեքնամ, որ իր կնոջ՝ Վիթթորիայի հետ Մատրիտի «Թորբերոն» օղակայանը ժամանեց, կը վերադառնար Քաննէն (Ֆրանսա), ուր մեկնած էր արձակուրդի:

Սպանիա կեցութեան ընթացքին Պեքնամ իր ընտանիքին հետ պիտի հաստատուի Մատրիտի հիւսիսը՝ Լա Մորալիէլայի մէջ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԵԾԵԼԱՐՇԱԻ ՇՐՋԱՎԱԶՔ ԹԱՅԼԸՐ ԸԵՄԻԼԹԸՆ ՏԻՐԱՊԵՏԵՅ 16ՐԴ ԸԱՆԳՐՈՒԱՆԻՆ

Ֆրանսայի հեծելաբան շրջավազքին 16րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երեկ (օրուան մրդադարէն ետք), Փոյէն Պայոն (197,5 քմ.) վերջ գտաւ ամերիկացի թայլըր Հէմիլթընի (Սի. Էս. Սի.) յաղթանակով, որ ժամանան գիծ հասաւ արձանագրելով 4 ժամ 59 վայրկեան եւ 41 երկվայրկեան արդիւնք մը: Անոր ետին գտնուող հեծելաւորներուն մեծամասնութիւնը ժամանան գիծ հասաւ 1'55" ուշացումով:

Անոնց կարգին էին գերմանացի Եան Ուլրիշ (Պիանքի) եւ ամերիկացի Լէնս Արմսթրոնկ (Եու. Էս. Փոսթալ): Այս մէկը պատճառ դարձաւ, որ ընդհանուր դասաւորման մէջ Արմսթրոնկ պահէ իր ունեցած 1'07"ի առաւելութիւնը Ուլրիշի վրայ, նաեւ իր մօտ պահելով դեղին շապիկը:

32 տարեկան Հէմիլթըն, որ շրջավազքի երկրորդ օրէն (Կիրակի, 6 Յուլիս) ի վեր կը տառապէր ուսի ցաւէ, այսպիսով շահեցաւ այս շրջավազքի լեռնային վերջին հանգրուանի մրցումը: Հէմիլթըն, որ արձանագրեց այս շրջավազքին իր առաջին յաղթանակը, ընդհանուր դասաւորման մէջ բարձրացաւ 6րդ դիրք, 6'35" ուշացումով ետ մնալով Արմսթրոնկէն:

Կանաչ շապիկին համար պայքարող գերմանացի Էրիք Յապըլ (Թելեքոմ), որ արդեւ 2րդ դիրքը, այժմ ընդհանուր դասաւորման մէջ 13 կէտով ետ կը մնայ աւստրալիացի Պէյտըն Բուքէն (Ֆէ. Տէ. Տէօ.): Այսօր տեղի ունենալիք 17րդ հանգրուանի մրցումը, Տայէն Պորտո (181 քմ.), առաջին հերթին պիտի ըլլայ տափարակ գետնի վրայ հանգրուան մը, իսկ երկրորդ՝ կանաչ շապիկի տիրոջ սին համար պայքար մը:

Կը կարծուի, որ 19րդ եւ նախաՎերջին հանգրուանի մրցումը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Յուլիսին եւ պիտի ըլլայ ժամացոյցի դէմ մրցում մը, Փորնիքէն Նանթ (49 քմ.) պիտի յայտակարգէ ախոյեանին անունը:

Հեծելաբանի միջազգային ֆեդերասիոնը շրջանակէն հանգրուանի մրցումը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Յուլիսին եւ պիտի ըլլայ ժամացոյցի դէմ մրցում մը, Փորնիքէն Նանթ (49 քմ.) պիտի յայտակարգէ ախոյեանին անունը:

Հեծելաբանի միջազգային ֆեդերասիոնը շրջանակէն հանգրուանի մրցումը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Յուլիսին եւ պիտի ըլլայ ժամացոյցի դէմ մրցում մը, Փորնիքէն Նանթ (49 քմ.) պիտի յայտակարգէ ախոյեանին անունը:

Հեծելաբանի միջազգային ֆեդերասիոնը շրջանակէն հանգրուանի մրցումը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 26 Յուլիսին եւ պիտի ըլլայ ժամացոյցի դէմ մրցում մը, Փորնիքէն Նանթ (49 քմ.) պիտի յայտակարգէ ախոյեանին անունը:



Թայլըր Հէմիլթըն

1. Թայլըր Հէմիլթըն (Մ. Ն.) Սի. Էս. Սի. 4 ժամ 59' 41"
2. Էրիք Յապըլ (Գերմանիա) Թելեքոմ 1'55" ուշ
3. Եուրի Քրիվթոն (Ուքրանիա) Ժան Տըլեյուիլ 1'55" ուշ
4. Լուքա Փաուլիսի (Իտալիա) Քուրթ Սթեփ 1'55" ուշ
5. Կերիք Կլոմսըր (Աւստրիա) Սայթո 1'55" ուշ

17. Եան Ուլրիշ (Գերմանիա) Պիանքի 1'55" ուշ



Ռիշար Կիրեցը՝ որ կը հագնի լեռնային լաւագոյն հեծելաձուլի շապիկը

24. Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եու. Էս. Փոսթալ 1'55" ուշ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ:

1. Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եու. Էս. Փոսթալ 70 ժամ 37' 59"

2. Եան Ուլրիշ (Գերմանիա) Պիանքի 1'07"


ԿԵՏԵՐՈՒ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

- ԿԷՏ
1. Պէյտըն Բուքէն (Աւստրալիա) Ֆէ. Տէ. Տէօ. 156
 2. Ռոպի Մաքիվըն (Աւստրալիա) Լոթո 148
 3. Էրիք Յապըլ (Գերմանիա) Թելեքոմ 143

ԼԵՆԱՅԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

- ԿԷՏ
1. Ռիշար Կիրեցը (Ֆրանսա) Քուրթ Սթեփ 324
 2. Լորան Տիւֆօ (Չեխոսլովակիա) Ալեյտի 187
 3. Լէնս Արմսթրոնկ (Մ. Ն.) Եու. Էս. Փոսթալ 168

ՉԵԼՍԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ Է ՎԻԵՐԻՈՎ



Քրիսթիան Վիերի

Նոր մարզիկներու գնման համար արդէն իսկ 42 միլիոն ամերիկեան տոլար ծախսած Չելսի երեկ յայտարարեց, թէ այժմ հետաքրքրուած է Մանչեսթըր Եւոնայթընի միջնապահ Սեպուսթիան Վերիոնով եւ ինքից Միլանի յառաջապահ Կրիսթիան Վիերիով:

Վիերիի փոխանցման գումարին մասին ցարդ ոչինչ կը յայտարարուի, սակայն Վերիոնի Զելսի միացումը կը կարծուի, որ լոնտոնեան կազմին արժէ շուրջ 14 միլիոն ֆունտ, այսինքն երկու տարի առաջ Եւոնայթընի Լացիո Ռոմայի վճարած գումարէն կէսէն նուազ գումար մը:

Չելսիի սեփականատէջը ռուս միլիոնատէր Ռոման Ապրամովիչ կ'ըսէ, թէ կ'ուզէ կազմել այնպիսի խումբ մը, որ յաղթելից պէտք տարիներուն ընթացքին յաջողի չահիլ «Չէմփիընզ Լիգ» ըստակը:

ՔԱՐԱՍԵԱՆ ԵՂՐԱՅՐՆԵՐ ՄԻԱՅԱՆ ՔԻԵՒԻ ԱՐՍԵՆԱԼԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբին մաս կազմող միջազգային յառաջապահներ՝ Արման եւ Արտաւազ Գարամեաններ, երեկ երկու տարուան համաձայնագիր ստորագրեցին Քիւեի Արսենալ խումբին հետ:

ՀԱՅ ՍԱՐԶԻԿՆԵՐ՝ ԹԵՆԻՍԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՄԱՆ ՄԷՉ

Լիբանանի թենիսի ֆեդերասիոնը երեկ հրապարակեց տղոց եւ աղջկանց նոր ընդհանուր դասաւորումը, որուն մէջ պարագլուխի դիրքերը կը գրաւեն Ֆէտի Եուսէֆ (300 կէտով) եւ Լայալ Մաուայա (450 կէտով): Տղոց դասաւորման մէջ 4րդ դիրքին վրայ կը գտնուի Ալեքս Յարութիւնեան (150 կէտով), իսկ 12րդ դիրքին վրայ՝ Սերժ Տագէսեան (90 կէտով): Աղջկանց դասաւորման մէջ 9րդ դիրքը կը գրաւէ Նազելի Գասապեան (40 կէտով):

ՄԱՆՉԵՍԹԸՐ 4-0 ԱՐԴԻԻՆՔՈՎ ՏԱՊԱԼԵՅ ՍԵԼԹԻՔԸ



Ֆերկլըն (ձախից) եւ ՕԳիլ՝ մրցումէն առաջ

Սիւթթըրի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցած ֆուտբոլի ռաբեկ մատակարար մրցումի մը ընթացքին Անգլիոյ ախոյեան Մանչեսթըր Եւոնայթընը 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց Սելթիքը: Մրցումը տեղի ունեցաւ «Սիհոքս»ի դաշտին վրայ, աւելի քան 66 հազար համակիրներու ներկայութեամբ:

ԻՏԱԼԻՈՅ ԳԵՐԲԱԺԱԿԻ ՄՐՅՈՒՄԻՆ ԻՐԱՒԱՐԱՐԸ՝ ՓԻԵՐԼՈՒԻՃԻ ԶՈԼԻՆԱ

Օգոստոս 3ին, Նիւ Եորքի մէջ (Մ. Ն.) տեղի ունենալիք Իտալիոյ ֆուտբոլի գերբաժակի մրցումին զլխաւոր Իրաւարը պիտի ըլլայ Փիերլուիճի Քոլինս, յայտնեց Իտալիոյ ֆուտբոլի ֆեդերասիոնը, որ վերջին տարիներուն այդ մրցումը միշտ ալ օտար երկիրներու մէջ կը կատարէ, յայտնապէս իտալական ֆուտբոլը օտար երկիրներուն ծանօթացնելու համար:

«Ճալնիթց»ի դաշտին վրայ տեղի ունենալիք այդ մրցումը, որ իրարու դէմ պիտի հանէ Իտալիոյ ախոյեան Եուլիանո Եուլիանոն եւ Իտալիոյ բաժակակիր՝ Ա. Մէ. Սիլանը, պիտի ըլլայ կրկնութիւնը անցեալ Մայիսին տեղի ունեցած «Չէմփիընզ Լիգ»ի մրցաշարքի աւարտականին: Օրին Ա. Մէ. Սիլան փենալթիներով պարտութեան մատնած էր Եուլիանոն:

Իտալիոյ ֆուտբոլի ֆեդերասիոնը յայտնեց, թէ գերբաժակի այս մրցումին պիտի կիրարկուի «Սիլվըր» կոլի դրուիւնը, որ առաջին անգամ ըլլալով Եու. Է. Էֆ. Ա. Ի կողմէ կիրարկուեցաւ անցեալ Մայիսին, Փորթոյի եւ Սելթիքի միջեւ Եու. Է. Էֆ. Ա. Ի աւարտական մրցումին:

ՔԱՍԱՐԱ ՓՈՆ ՏՐՈՒԵՑԱԻ ԼԻԾԻՆ ԻՍԿ Ն՝ՏԻԱՅԷ ՄԻԱՅԱԻ ՄԱՐՍԷՅԻՆ

Լանսի յետապահ Չուսանա Քամարա մէկ տարուան համար փոխ տրուեցաւ Լիծի, յայտնեցին ֆրանսական կապիտալ պատասխանատուները, աւելցնելով, որ այսպիսի Լիծ մտադիր է 24 տարեկան մարզիկը գնել, անշուշտ եթէ ակումբը գոն մնայ անոր ունեցած խաղարկութեան: Ան 2001ին Լանսի միացած էր Մարսելէն, մինչ Լանսին Սաիմ մեկնած էր հակառակ ուղիով:

Քասարա Փոն պատասխանատուները յայտնեցին, թէ սեւեռակցի միջազգային միջնապահ Սիլվէն Ն'տիլայէ դարձաւ Երրորդ մարտիկը, որ 2002-2003 եղանակի ախոյեանութեան աւարտին կը միանայ խումբին (փոխանցում) Լիծին:

ԹԵՀՐԱՆ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ, ԹԷ ՉԵՐԲԱԿԱԼԱԾ Է «ՔԱՅԻՏԱ»Ի ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ ԱՆԳԱՄՆԵՐ



ԵՆԻՍԵՍԻ

Վերջ դնելով շարքերը կատարուող ենթադրություններուն եւ ակնարկութիւններուն, Թեհրան երէկ պաշտօնապէս յայտարարեց, թէ արգելափակած է «Քայիտա»ի բարձրաստիճան անդամներ, որոնք մօտ օրէն պիտի դատուին կամ արտաքսուին:

Իրանի անվտանգութեան նախարար Ալի Ենուսեանի կատարելով վերոնշեալ հաստատումը, անուններ չհրատարակեց, սակայն ըսաւ, որ 2001ին ԱՖղանիստանի մէջ Թալեպան շարժումի իշխանութեան տապալումէն ետք իրանեան ապահովական մարմիններու կողմէ ձերբակալուած «Քայիտա»ի անդամներու շարքին են Ուսամա Պըն Լատէհի բարձրաստիճան օգնականներ: «Թալեպանի տապալումէն ետք ձերբակալուած ենք «Քայիտա»ի բազմաթիւ անդամներ, որոնցմէ ոմանք յանձնուած են իրենց մայր երկիրներուն», յայտնեց Ենուսեան մամուլի ասուլիսի մը ընթացքին:

Իրանի ներքին գործոց նախարար Ապտիլվահիտ Մուսաուի Լարի իր կարգին յայտնեց, որ «Քայիտա»ի ձերբակալուած անդամներէն ոմանք պիտի դատուին Իրանի մէջ:

Դիւնաագէտները շարքերէն ի վեր դիտել կու տային, թէ Իրան ձերբակալած է «Քայիտա»ի բարձրաստիճան անդամներ եւ գաղտնի բանակցութիւններ կը վարէ Եգիպտոսի, Քուէյթի եւ Սէուտական Արաբիոյ հետ, ձերբակալուածներուն ձեռնարկութիւնը շուրջ:

ԽԱԹԵՄԻ ԿԸ ՊԱՇՏԱՆԶԷ ԲԱՑԱՅԱՅՏԵԼ ՉԱՐՈՒ ԲԱԶԵՄԻ ՄԱՆՈՒԱՆ ԲՈԼՈՐ ԾԱԼԵՐԸ

Քանատա երէկ յայտնած է, թէ Թեհրանի մէջ իր դեսպանը տուն պիտի կանչէ, իրանցի - քանատացի թղթակից Չահրա Քալեմիի իրանեան իշխանութիւններուն կողմէ թաղուանք ետք: Քալեմի ոստիկանութեան կողմէ ձերբակալուել է արգելափակուելէ ետք մահացած էր:



Քանատական կառավարութիւնը եւ Քալեմիի որդին պահանջած էին, որ անոր դիակը Քանատա վերադարձուի: Քալեմի երէկ թաղուեցաւ Շիրազի մէջ:

Արտաքին գործոց նախարար Պիլ կրէհէմ, ակնարկելով իրանեան խուսափանութեան, թէ Քալեմի արգելափակումն միջոցին ծեծուած է եւ մահացած, ըսած է, թէ Քանատա կը պահանջէ ամէն գնով գիտնալ, թէ ի՞նչ պատահած է:

Մինչ այդ, Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի երէկ անկախ քննութեան պահանջ դրած է՝ Քալեմիի մահուան ծալքերուն շուրջ:

Նախագահ, Թեհրանի ընդհանուր դատախաչ Սաիտ Մորթապալի, որ ծայրայեղական պահպանողական մըն է, թղթակիցին մահուան շուրջ քննութիւններու պատասխանատուութիւնը բանակին յանձնած էր, ըստ ուսանողական «ԻՄՆԱ» լրատու գործակալութեան: Անոր մահուան մասին կաշտօնական տեղեկագիր մը երկու-

շարքի օր յայտնած էր, թէ 54 տարեկան թղթազած էին, որ անոր դիակը Քանատա վերադարձուի: Քալեմի երէկ թաղուեցաւ Շիրազի մէջ:

Սալայն կառավարութեան հետքական նիստէն ետք, Քալեմի յայտնած է, թէ դատական իշխանութիւնները իրեն խոստացած են, որ հարցին շուրջ քննութիւնները պիտի յանձնուին անկախ դատարարի մը, որ «ոչ բանակին, ոչ այլ Թեհրանի դատախաչութեան գրասենեակին հետ կապ պիտի ունենայ»:

(ԱՅՓ)

ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐ ԵՃԵՒԹ ԵՒ ԵՂՄԱԶ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԵԱՄ, ՓՏԱԾՈՒԹԵԱՄ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՈՎ ԿՍՄԲԱՍՏԱՆՈՒԻՆ

ԱՆԳԱՐԱ, 23 (ԱՅՓ).- Թուրք երեսփոխաններ Չորեքշաբթի օր առաջարկած են նախկին վարչապետներ Պիլիէթի Էմէիթի եւ Մետաթ Երլմապի շուրջ փտածութեան եւ իշխանութեան չարաշահումի հարցերով քննութիւն բանալ, ինչ որ կրնայ պիտի վերջոյ դատարանի հասցնել:

Խորհրդարանական յանձնախումբ մը նաեւ քննութեան առաջարկ կատարած է նախկին 23 նախարարներու շուրջ՝ 4 ամիս տեւած քննութիւններէ ետք:

Խորհրդարանին ներկայացուցած տեղեկագրի մը մէջ, յանձնախումբը, որ կազմուած է յատկապէս փտածութեան եւ կաշտակերութեան շուրջ քննութիւն կատարելու համար, բարձրատիճան անշատ 15 յանձնախումբերու կազմութիւնը պահանջած է՝ ամբաստանութիւններուն շուրջ աւելի մանրամասն քննութիւն բանալու նպատակով:

Տեղեկագիրը Էմէիթը կ'ամբաստանէ երկու տարբեր պարագաներու իշխանութիւնը չարաշահած ըլլալու յանցանքով:

Երլմապ, որ 1990ական թուականներուն երեք անգամ վարչապետ եղած է, 1998ին պետական դրամատան մը վաճառքին կապակցութեամբ կաշտակերութեամբ ամբաստանուած է:

Եթէ յանձնախումբերը բարար փաստեր ապահովեն եւ եթէ խորհրդարանը թուեարկէ ի նպատ դատավարութեան, ապա ամբաստանեալները պիտի չեն կարողանալ յարուստեան նի մը՝ բաղկացած սահմանադրական տեսանի անդամներէ:

Քննադատներ կ'ըսեն, թէ քննութիւնները քաղաքական դրապատմաններ ունին, դիտել տալով, որ յանձնախումբը անտեսած է վարչապետ Ռեճէփ Թայիյի Էրտողանի դէմ կաշտակերութեան ամբաստանութիւնները՝ 1990ական թուականներու կէսերուն, երբ ան Պոլսոյ քաղաքապետ էր:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Շարունակուած 3րդ ԷջԸԸ
պէտք է հսկէ նշեալ բանա՝ ձեւերու գործադրութեան: Սրժաճա յայտնեց, որ ՄԱԿի դերակատարութիւնը հարաւի մէջ սահմանային կապոյտ Գիծին եւ ապահովութեան կաշտօնախումբին հետ շարունակուած է: Անոր մահուան մասին կաշտօնական տեղեկագիր մը երկու-

«ԵՌՈՒՔՈՍ»Ի ՏԱԳՆԱՊԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՄՏԱՀՈԳԵԼ ՌՈՒՍԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

ՄՈՍԿՈՒԱ, 23 (ԱՅՓ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Չորեքշաբթի օր հրահանգած է իր կառավարութեան, որ գործարարական սեփական մարչին պետութեան միջամտութիւնը սահմանափակէ, քարիւղի հսկայ՝ «Երոքոս» ընկերութեան առնչուող երեք շաբթուան տազնապին հասցուցած վնասը կատարուի:



Ասիկա Փութինի առաջին հակադարձութիւնն էր հարցի մը, որ մտախախտութիւններ պատճառած է ներդրումներ կատարող տեղացիներու եւ օտարներու մօտ, թէ կառավարութիւնը կ'առաջարկէ 1990ական թուականներու կէսերուն սեփականաշնորհումի «կասկածելի» համաձայնութիւններ վերատեսութեան ենթարկել եւ ունեցած քննութիւնները վերաքաշուի կատարել:

Նման քայլ մը կրնայ դրամագլուխներու երկրէն հեռացումն մեծ ալիք մը ստեղծել, մինչ անոնք հապի սկսած են «կաթիլ - կաթիլ» Ռուսիա վերադարձուիլ՝ երկրին տնտեսական վերականգնանքին պատճառով:

«Երոքոս»ի հարցը, որուն շեշտը ընկերութեան գլխաւոր բաժնետիրը եւ երկրին ամէնէն հարուստ մարդուն՝ Միխայիլ խոտորովի վրայ կեդրոնացած է, մղած է քաղաքական քանի մը բարձրաստիճան անձնաորութիւններ՝ վերադարձուիլ վերատեսութեան դիմելու կոչ կատարելու: Հակառակ Փութինի միջամտութեան, տազնապին հետեւանքները շարունակուած են երկրի: Ընկերութեան թիւ երկու բաժնետէր Փլաթոն Լեպիտեի մերժումը եւ երաշխաւորագին ճշդել եւ իրահանգում է պայմանաւորական 1994ին սեփականաշնորհումի կապուած համաձայնութեան մը առնչուող ամբաստանութեան պատճառով:

«Երոքոս»ի բաժնեկալիքը առեւտրի որոշումէն հապի 30 վարկեան ետք շուրջ 2 առ հարիւրի անկում արձանագրած է:

Ընկերութեան պատասխանատուներուն համաձայն, «Երոքոս»ի դէմ հարցը քաղաքական դրապատմաններ կը հետապնդէ:

●ՌՈՒՍ 2 սպաներ են անշտաղակաւ 4 ըմբուսներ սպանուած են Չորեքշաբթի օր արեւելեան Չեչենիոյ մէջ, բախումի մը ընթացքին:

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԷՃԻ ...

Շարունակուած՝ 4րդ ԷջԸԸ

յոց առաջնորդ Գեորգ Տ. Գեղամ եպօ. Խաչերեանի, ինչպէս նաեւ Ազգային իշխանութեան ուսումնական խորհուրդի ներկայացուցիչներու, վարժարանի խնամակալութեան, ծնողներու եւ բարեկամներու ներկայութեամբ:

Այս տարուան հանդէսը նուիրուած էր Սիւրբ Երմիայի 125ամեակին: Լիբանանի, Հայաստանի եւ վարժարանի քայլերգներու ունկնդրութեանն էր, բացման խօսք արտասանեց աւարտական կարգէն Արփի Պոյաճեան: «Սիւրբ Երմիայի բանաստեղծութիւնները կը ներկայացնեն Հայուն տառապանքը, հերոսական պոռթկումները, վրիժառութեան ոգին, յուսատու եւ վարդազոյն ապագան», ըսաւ ան, շեշտելով, որ Սիւրբ Երմիայի եղաւ իր ժամանակի շունչը, որ կը փոխանցուի սերունդէ սերունդ: փաստը՝ իրեն նուիրուած այս հանդէսը:

Բացման խօսքին յաջորդեց գեղարուեստական յայտագիր մը, որուն մէջ խմբուած էին փունջ մը բանաստեղծական կտորներ Սիւրբ Երմիային եւ ազգային ու Հայրենասիրական երգեր:

Գեղարուեստական բաժնի աւարտէն ետք, վարժարանի տնօրէնուհի՝ օրը. Մանուկէ Պոյաճեանի ներկայացուցեց հակիրճ տեղեկագիրը 2002 - 2003 տարեշրջանին: Ան շեշտեց կարեւորութիւնը որեւէ աշխատանքի արժեւորման, որովհետեւ ճիշդ արժեւորումն է, որ կ'արդարացնէ աշխատանք մը նոյն ձեւով շարունակելու կամ բարեփոխելու որոշումը: Իսկ կրթական ընդլայնի աշխատանքը չի կրնար անփոփոխ շարունակուել եթէ կը յաւակնինք քայլ պահել շինիչ նորարարութիւններուն հետ: Տնօրէնուհին նշեց, որ տարեշրջանը Համեմատաբար հեզասահ ընթացած է, իրբեւ արդիւնք խնամակալութիւն - տնօրէնութիւն - ուսուցչական կազմ հաւաքական աշխատանքին ու ճիգերուն: Գծուարութիւններ անպայման արձանագրուած են, սակայն կարելի եղած է գանոնք եթէ ոչ լրիւ յաղթահարել, գէթ թեթեւեցնել ու մեղմացնել:

Վարժարանի տնօրէնուհին յայտարարեց նաեւ հետեւեալ մրցանակները.

- «Թամար Վարդանեան» մրցանակին արժանացաւ Փայթրիսիա Խուրիտեան:
- «Գէորգ Քերթէնեան» մրցանակին արժանացաւ Ալիք Ուրֆայան:
- «Սօսի Ուրֆայան» գեղարուեստական մրցանակը բաժնեկցեցան Հերա Մարկոսեան եւ Խաթակ Կէօքեան:
- Շրջանաւարտներէն՝ Կարինէ Կիւմիւշեան արժանացաւ Ժ., ԺԲ., ԺԲ. կարգերուն Հայագիտական նիւթերու բարձրագոյն միջինի մրցանակին:

Բեմ հրահրուելով վարժարանի 16րդ հունձքի 24 աշակերտ - աշակերտուհիները, տնօրէնուհին անոնց ուղղելով իր խօսքը ըսաւ. «Ի՛նչ պիտի տանիք ձեր հետ դպրոցէն. դասէ՛րը, ընկերո՞ջ հետ բաժնուած տխուր կամ ուրախ պահերու յուզումը, դասատուի մը յանգի-

մանական կամ խրատական ձայնը, ձեր չարաճեցումները: Դասատուները փորձեցին շատ բան սորվեցընել ձեզի՝ պատրաստելու համար պետական քննութիւններուն, եւ մանաւանդ չափահաս ու գիտակից մարդու պայքարին: Մնաք բարովի խօսքերը Սիւրբ Երմիայի բաժնով ըսինք արդէն: Մաղթանքս է, որ շուրջ դարու սրբնից արշաւին մէջ ծանօթանանք եւ կառչած մնանք իսկական արժէքներուն ու անզրադառնանք, որ կայ միշտ վեհը եւ մնայունը»:



Ապա, շրջանաւարտները իրենց վկայականները ստացան ձեռամբ՝ Գեղամ եպօ. Խաչերեանի, որ իր խօսքին մէջ անզրադարձաւ հայկական վարժարանին վսեմ առաքելութեան եւ կարեւորութեան: Ան անզրադարձաւ նաեւ Սիւրբ Երմիայի արժէքին եւ շունչին, որ սերունդէ սերունդ կը շարունակէ փոխանցուիլ: Առաջնորդ սրբազանը ըսաւ նաեւ, որ իրբեւ հաւաքականութիւն կը դիմագրաւենք շատ մը մարտահրաւերներ ու դժուարութիւններ, որոնք կը սպառնան ազգային գիտակցութեան եւ արժէքներուն: Աւարտին, անաջնորդ սրբազանը 2002 - 2003ի հունձքը անուանեց «Սիւրբ Երմիայի սերունդ»:

2002 - 2003 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՀՈՒՆՉՔԸ
Ազգաւորեան Սարիք, Աբրուիան Օսան, Գունտազեան Նաթալի, Եղիայեան Սիրուկ, Եղորտեան Լայլ, Կիւմիւշեան Կարինէ, Պոյաճեան Արփի, Մարտիկեան Յովնթ, Յակոբեան Սեւան, Պալոյեան Վիթի, Փոլաթեան Գայրա, Աղաջեան Փօլին, Արաւանեան Նայիրի, Սարգիսեան Հեմիլի, Քեչեանեան Մարալ, Օհանեան Շաբէ, Ապրուհեան Եղիկ, Գարակեօբեան Հրայր, Սեւեան Ռազմիկ, Ճեմանեան Արիկ, Քեչիշեան Վիգէն, Բուրբեան Սարգիս, Արաւանեան Հրանդ, Միքայելեան Ռազմիկ:

Ազգաւորեան Սարիք, Աբրուիան Օսան, Գունտազեան Նաթալի, Եղիայեան Սիրուկ, Եղորտեան Լայլ, Կիւմիւշեան Կարինէ, Պոյաճեան Արփի, Մարտիկեան Յովնթ, Յակոբեան Սեւան, Պալոյեան Վիթի, Փոլաթեան Գայրա, Աղաջեան Փօլին, Արաւանեան Նայիրի, Սարգիսեան Հեմիլի, Քեչեանեան Մարալ, Օհանեան Շաբէ, Ապրուհեան Եղիկ, Գարակեօբեան Հրայր, Սեւեան Ռազմիկ, Ճեմանեան Արիկ, Քեչիշեան Վիգէն, Բուրբեան Սարգիս, Արաւանեան Հրանդ, Միքայելեան Ռազմիկ: